№ 49 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 4 — 1901 — ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 4 № 49

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յայտարարութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. «Արձագանքներ. Մինիստր Բօգոլեպով. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղացու ցաւերից.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցանկալով խնամք տանել Ախալքալաքի գաւառի մի քանի գիւղերի անբերրիութիւնից վնասվածների մասին, երկրաշարժից վնասվածներին օգնող Գլխաւոր Մասնաժողովը սրանով յայտարարում է հետեւեալը. որովհետեւ եղած միջոցների շնորհիւ կարելի է ներկայ ամառվայ ընթացքում վերջացնել երկրաշարժից վնասվածներին օգնելու գործը: Մասնաժողովը բոլոր նուիրատուութիւնները յատկացնելու է անբերրիութիւնից վնասվածների օգտին: Նուիրատուութիւնները կընդունվեն շնորհակալութեամբ նոյն հիմնարկութիւնների և անձանց մօտ, որոնք յանձն էին առել ընդունելու երկրաշարժի համար եղած նուիրատուութիւնները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԶՐՈՅՑ

Մի խոշոր բարեգործութեան լուր հրատարակվեց այս շաբաթ: Մի նշանաւոր բարեգործութիւն: Նշանաւոր նախ՝ նուիրած գումարի քանակութեան կողմից. բայց աւելի նշանաւոր այն կողմից, որ կարելի է շատ վիճել, թէ ով է նուիրողը: Փողը—7000 ռուբլի կայ մէջտեղ. յայտնի է, թէ ով է տուել, բայց նուիրատուն փող տուողը չէ, այլ բոլորովին մի կողմնակի մարդ:

Ահա գործի էութիւնը:

Միլիոնատէր Առափելեանի տանից գողանում են մի վերարկու: Իսկոյն յայտնվում է ոստիկանութեան: Բայց ոստիկանական եռանդի վրա Առափելեանների տանը մեծ յոյս չունեն: Տիկին Առափելեան փողոցում պատահում է մի մարդու եւ նրան թւում է, թէ վերարկուի գողը հէնց այդ մարդն է: Իսկոյն կանչում է քաղաքապահ ոստիկանին եւ մատով ցոյց տալով անծանօթ մարդուն, ամենաղրական կերպով ասում է, թէ նա ուրիշի տներից վերարկու գողացող է: Անծանօթին բռնում են, չը նայած որ նա բողոքում է, ասում է, որ ինքը վերարկուների գող չէ, այլ ուսուցիչ է, Ծէրէթելի ազգանունով:

Գործը ստուգվում է ոստիկանատան մէջ. պրիստաւը տեղեկութիւններ է հաւաքում, հաստատվում է, որ տիկին Առափելեանի աչքին գող թուացած մարդը գող չէ, այլ ուսուցիչ: Զուր տեղից կալանաւորված մարդուն արձակում են, նա իսկոյն գանգատ է ներկայացնում դատարանին: Ոչ ոք չի ասի, թէ նա իրաւունք չունէր: Երեւակայեցէք. փողոցով անցնում էք դուք եւ յանկարծ մէկը բռնում է ձեր օձիքից, քարշ է տալիս ոստիկանատուն, ասելով թէ դուք գողացել էք արծաթի գդալներ, վերարկու, կօշիկ եւ էլ ինչ իմանամ. քիչ կայ գողանալու բան...

Համաձայնվեցէք, որ դա շատ անյարմար դրութիւն է, մի դրութիւն, որի մէջ կարող են ընկնել նոյն իսկ միլիոնատէրերը: Չէ՞ որ ամբողջ ապացոյցը թուալն է: Իսկ թուողը... ով կարող է ասել թէ ինչ մարդու ինչպէս թուում:

Ինչ եւ իցէ: Դատարանում տիկին Առափելեանին պաշտպանում են երկու երդուեալ հաւատարմատարներ: Բայց եւ այնպէս, դատաւորը դատապարտում է տիկնոջը եօթն օրվայ բանտարկութեան: Բայց հաշտարար դատաւորից յետոյ կայ նահանգական դատարան, վերջապէս դատաստանական պալատ: Գործը, սակայն, վերջնական վճռի չէ հասնում: Երկու կողմերը պատրաստ են հաշտվելու: Բայց ինչ պայմանով: Տիկին Առափելեան բարեգործական նպատակների յատկացնում է 700 ռուբլի եւ ազատվում է եօթն օրվայ բանտարկութիւնից:

Այժմ ինչ լաւ է, ինչ լաւ է վերջանում:

Այսպէս եւ այս դէպքում: Պ. Ծերէթելի չը կամեցաւ, որ միլիոնատիրոջ կինը անպատճառ բանտ նստէ եւ այնտեղ մտածէ, թէ որքան զարմանալի են աշխարհիս բաները: Դրա փոխարէն նա պահանջեց 7000 ռուբլի տալ բարի գործերի համար: Գովում ենք, շատ գովում ենք պարոնին դրա համար: Պատիւը վերադարձրեցինք, երկուսս հազիւ էինք կարողանում շարժվել, մօտ հինգ բոպէ ընկերս, առանց դժուարանալու, ցերեկվան պէս համարձակ առաջ գնալով՝ նկարագրում էր ինձ անցած ուղիներս: Ես թէեւ նրա ձեռքից բռնել էի ու միւս ձեռքովս էլ խարխափում էի չորս կողմը, այնու ամենայնիւ մի քանի անգամ գլուխս պատերին խփելուց յետոյ հազիւ հասանք «գոմին դռանն» ու բացինք:

Անասունների գարշահոտ տոթը ամպի պէս աչքերս առաւ ու դուրս վիժեց բացված անցքից: Մտանք ներս եւ ահա առաջներս է Զախալենց հռչակաւոր «գոմին օդան»:

Դէմ ու դէմ ծխում է նահապետական նախշուն «օջախը», ընտանիքի սրբութիւնը: Օջախի երկու կողքին ջուխտ «սաարների» (թախտերի) վրա ըստ «կարգի» եւ հասակի ծալապատիկ նստած էին 25—30-ի չափ գիւղացիներ: Մէջտեղը կանգնած էր մի յաղթանդամ, մեծ բերանով մարդ, որի ձեռքին սաղի պէս բռնած փայտը ցոյց էր տալիս նրա ուղղութիւնը:

Ինձ, իբրեւ հիւրի, վեր հրամցուցին ու ծերունիների կարգում օջախի մօտ նստեցրին: Ամենքը ջոկ-ջոկ ինձ բարեւելուց եւ «քէֆս ու հալս» հարցնելուց յետոյ, կարօ տացուն դարձաւ աշուղին.

—Դէհ, ուստա Խաչօ, ըսէ աշենք, զաւալի (ցաւալի) Քեարամն ինչ էրաւ էդ հարսին:

Ուստա Խաչօն մի հպարտ եւ ինքնագոհ հայեացքով դիտեց չորս կողմը, ոտքը ուժով գետին խփեց ու քիթ-բերան ծռմռելով, սկսեց մի թուրքերէն խաղ:

Կարօ տացուն, որ, ինչպէս երեւում էր, գիւղական այդ կլուբի ղեկավարն էր, ընդհատեց նրան:

—Չեղաւ, ուստա, չեղաւ, նորվանը կէնա ըսէ, նորվանը (մի քիչ առաջ ասածդ), տիրացուէն մի քաշվի, անա հողեղէն է, իլա որ (մանաւանդ) ջահիլ է, մեր Ղ—ն է, բան չիսե... Դէ արի, արի աշեմ բուկդա մէմը թրջէ ու ինչ որ հիւնեար (շնորք) ունիս թափէ...

Օջախի գլխից ցած բերին արաղով լի չիշ, որ աշուղի բաժինն էր, ու երբ ես շնորհակալութեամբ մերժեցի ինձ առաջարկված պատիւը, մի բաժակ աշուղին տալով, դարձեալ վերցրին:

Ուստա Խաչօն աջ ձեռքով ծոծրակը քերեց, ձախով քիթը մի ամուր վեր քաշեց, ծռմռվեց, յետ ընկաւ, օձի պէս գալարվեց ու յանկարծ մի գարշելի խռխռան ձայնով սկսեց գոռալ մի ինչ որ թուրքերէն խաղ, որի մէջ նկարագրում էր բաղդախնդիր Քեարամի հանդիպումը մի հարսի, որին աղերսում է նա իր կինը լինել... Բոլորը լուռ լսում էին գուցէ տասն անգամից աւել լսածները, կարծես առաջին անգամն էր: Նոյն իսկ վերեւի «սեադրի» վրա չարված հարսաղջիկները թողել էին իրանց «ջահրա-թեչիկները» ու դարձած դէպ «հրաչալի» երգչի գարշելի գեղգեղը, ագահութեամբ լսում էին: Բայց յանկարծ նա լռեց, ինքնաբաւական յաղթական հայեացքով չորս կողմը դիտեց ու պատռատած շրթունքները կոծոտելով, աչք ու յօնքը վեր վար քշելով, իր դերի մէջ վաղուց փորձված հմուտ դերասանի պէս ամբողջ մարմնի շարժումներով սկսեց հայերէն նկարագրել թուրք տարփածուի այդ նոր, գուցէ հարիւրերորդ սիրուհուն:

—Հ՞ըմը հարս... հարս չէ հիւրի մեալակ (յաւերժահարս). երեսն—ահան, ծծերն ահան (ձեռքերով ցոյց է տալիս չափը), ինչ ծիծ, տեսնողը կըսէր մէմը ծըծէի թէաք (թէուզ) մեռնէի... մէջքն ահան...

Ու ձեռքերի, քիթ-բերանի, ամբողջ մարմնի լպիրշ շարժումներով գիւղական այդ դերասանը աշխատում էր «հիւրիմեալակ»-ի մարմնի բոլոր մասերը, առանց խտրութեան ոտքից մինչեւ գլուխ, պատկերացնել իր հետաքրքիր ունկնդիրներին, որոնք բերանների ջրերը վազեցնելով, աչքերի շնորհքը գովաբանելով հրճռռում էին:

—Մէկեար կըլմանիր մեր գեղին գիւղալը, վերջացրեց աշուղը իր նկարագրած գեղեցկուհին նմանեցնելով իրանց գիւղի հարսներից մէկին, որի ամուսինը հէնց այդտեղ նստած՝ հպարտ, հպարտ քոքռալով լսում էր իր կնոջ մարմնի մասերի վառ նկարագիրը:

—Էվալլա, ուստա, էվալլա, ընդհատեցի ես, տալով մի քանի կոպէկ.—շնորհակալ ենք, կեցի մի քիչ էլ խօսենք. ես վաղուց է գիւղ չէի եկել:

Չորս կողմից աչքերի սիրահար ունկնդիրները խէթ խէթ նայեցին ինձ, բայց ոչ մէկը սիրտ չարաւ ձայն հանել, բոլորը լուռ յօնքերը կախեցին:

—Է՛, ինչ կայ, ինչ չը կայ գիւղում նոր բան:

—Ի՞նչ պիտի ըլի, տիրացու ջան, գեղին բանը չիտես. մէկը աղջիկ կը նիշանէ, մէկը մանչ (տղայ), մէկը կը փախցընէ, մէկալը (միւսը) կը պսակէ, մէկը եդ կըլի... ես ինչ գիտեմ: Երէկա դիա Գաբօենց աղջիկն են փախուցել:

—Ծօ, ինչ փախցնել, աղջիկն ինքն ելել իրեն ոտով գնացել է, թէ չէ էն չըրչըփլաղին (մեր կ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

(Պատկեր Ախալքալաքի գաւառի կեանքից)

I

Ձմեռ է: Խիստ բուք ու բորանից դուրսը կենդանի չունչ չէ մնացել: Ինս ու ջինս, հաւ ու ճիւ քաշվել են իրանց բները, ժողովվել, խուլուլվել տաք գոմերում: Գիւղը մնացել է կատաղի քամուն, որ վը՛ռ հա վը՛ռ փչում է եւ կտուրների ու փողոցների ձիւնը հաւասարում: Երբեմն միայն ինչ որ սեւ սեւ բաներ դուլուլված, գունդ ու կծիկ եղած, վազելով գիւղի նեղ ու ծուռ փողոցներով, ներս էին ընկնում մի մութ ծակից, որի շուրջը դէղ էր կապել սպիտակ ձիւնի ահագին շերտը:

Զախալենց տունն էր դա, ուր սովորաբար հաւաքվում են գիւղացիները ձմեռվայ երեկոներին «նստելու»:

Գիւղական այդ պարզ ժողովատունը ինձ էլ հետաքրքրեց ու մի երեկոյ ես էլ քայլերս ուղղեցի դէպի Զախալենց «գոմի օդան»:

Ձիւնապատ ծակից գլխիվայր իջանք «էօրթմանը»: Դա գիւղական տան նախասենեակն է, որ շինվում է ժամանակաւորապէս աթարով, որպէս զի ձմեռը ձիւնը ներս չը լցվի. գարնանը նա քանդվում է: Այդտեղից անցանք «բակը», մի նեղ ու մութ անցք, գրեթէ ստորերկրեայ անցքի պէս առանց լուսամուտի. եթէ կար էլ մի փոքրիկ ծակ, այն էլ երեւի ձիւնն էր ծածկել: Այդ ծուռ ու մուռ ճանապարհով,

—Չեղաւ, ուստա, չեղաւ, նորվանը կէնա ըսէ, նորվանը (մի քիչ առաջ ասածդ), տիրացուէն մի քաշվի, անա հողեղէն է, իլա որ (մանաւանդ) ջահիլ է, մեր Ղ—ն է, բան չիսե... Դէ արի, արի աշեմ բուկդա մէմը թրջէ ու ինչ որ հիւնեար (շնորք) ունիս թափէ...

Օջախի գլխից ցած բերին արաղով լի չիշ, որ աշուղի բաժինն էր, ու երբ ես շնորհակալութեամբ մերժեցի ինձ առաջարկված պատիւը, մի բաժակ աշուղին տալով, դարձեալ վերցրին:

Ուստա Խաչօն աջ ձեռքով ծոծրակը քերեց, ձախով քիթը մի ամուր վեր քաշեց, ծռմռվեց, յետ ընկաւ, օձի պէս գալարվեց ու յանկարծ մի գարշելի խռխռան ձայնով սկսեց գոռալ մի ինչ որ թուրքերէն խաղ, որի մէջ նկարագրում էր բաղդախնդիր Քեարամի հանդիպումը մի հարսի, որին աղերսում է նա իր կինը լինել... Բոլորը լուռ լսում էին գուցէ տասն անգամից աւել լսածները, կարծես առաջին անգամն էր: Նոյն իսկ վերեւի «սեադրի» վրա չարված հարսաղջիկները թողել էին իրանց «ջահրա-թեչիկները» ու դարձած դէպ «հրաչալի» երգչի գարշելի գեղգեղը, ագահութեամբ լսում էին: Բայց յանկարծ նա լռեց, ինքնաբաւական յաղթական հայեացքով չորս կողմը դիտեց ու պատռատած շրթունքները կոծոտելով, աչք ու յօնքը վեր վար քշելով, իր դերի մէջ վաղուց փորձված հմուտ դերասանի պէս ամբողջ մարմնի շարժումներով սկսեց հայերէն նկարագրել թուրք տարփածուի այդ նոր, գուցէ հարիւրերորդ սիրուհուն:

—Հ՞ըմը հարս... հարս չէ հիւրի մեալակ (յաւերժահարս). երեսն—ահան, ծծերն ահան

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
XXXVIII

Անցած կիրակի օրվայ «Новое Обозрѣніе» լրագրում տպված էր մի յայտարարութիւն, որ գրաւեց ամենքի ուշադրութիւնը։ Թիֆլիս քաղաքում գտնվող վրացի ծառաները այդ յայտարարութեամբ հոգեհանգստի էին հրաւիրում հանգուցեալ վրացի բանաստեղծ իշխան Էրիսթովի տաղանդի յարգողներին։

Այդ յայտարարութիւնը կարդալիս ես յիշեցի մի միջնադէպք եւրոպացի մի հռչակաւոր բանաստեղծի, եթէ չեմ սխալվում, Վիկտոր Հիւգոյի, ճանապարհորդութիւնից։ Հարաւասիական կղզիներից մէկի հիւրանոցում, թէ չոգենաւում, լաւ չեմ յիշում, բանաստեղծը, ճաշի նստելիս, նկատում է, որ իր սեղանը առանձնապէս զարդարված է չքեղ ծաղիկներով։ Այդ նրան հետաքրքրում է։ Դուրս է գալիս, որ ճաշ գցող ծառան,—մի սեւամորթ թէ դեղնամորթ—իր բանաստեղծական տաղանդի յարգողներից է, եւ այդ յարգանքը, արտայայտված այդքան անակնկալ ու այդքան սրտաշարժ կերպով մի կիսավայրենի ծառայի կողմից, աւելի թանդագին է թւում յուզված բանաստեղծին, քան հարիւրաւոր ուրիշ, աւելի հանդիսաւոր, աւելի աղմկալից յարգանքի ցոյցեր։

«Եթէ մի բոպէ հանգուցեալ Էրիսթով կարողանար կենդանութիւն ստանալ եւ տեսնել, թէ ինչ է կատարվում իր թաղմանն ու հոգեհանգստին, անշուշտ ամենից շատ կը յուզէր նրան ծառաների ցոյցը, մտածում էի ես կարդալով յայտարարութիւնը. ազնուականներ եւ աստիճանաւորներ կարող են ներկայ լինել շատ ուրախ կամ տխուր հանդէսի, բայց ներկայացուցիչներ Թիֆլիսի բոլոր վրացի ծառաների եւ աղախինների կողմից կարող են լինել միայն այնպիսի մարդու հոգեհանգստի ժամանակ, որ իր տաղանդով բարի զգացմունքներ է զարթեցրել իր բոլոր հայրենակիցների մէջ անխտիր»։ Եւ այդ միտքը մի աւելորդ պատճառ էր, որ ես խոնարհեցնէի գլուխս այդ բանաստեղծի յիշատակի առաջ։

Սակայն այդպէս չէր ամենքի տպաւորութիւնը։ Շատերը անտեղի էին գտնում այդ յայտարարութիւնը։ Այդ շատերից մէկը նոյն իսկ բացականչեց. «Ինչո՞ւ է խմբագրութիւնը ընդունել այդպիսի յայտարարութիւն»։ Եւ այդ մէկը խելօք, զարգացած, արդարադատ եւ վարմունքի մէջ շատ պարզ անձնաւորութիւն էր։

Սակայն։ Մարդիկ են ծառաները. ի հարկէ։ Իրաւունք ունեն նրանք կարդալ բանաստեղծական գրուածքներ. անկասկած։ Ընդունակ են սիրել այս կամ այն բանաստեղծին, ընդունակ են վիշտ զգալ, երբ մեռնում է իրանց սիրած բանաստեղծը. անշուշտ ընդունակ են։ Հապա ինչո՞ւ խելօք, զարգացած եւ նոյն իսկ ազատամիտ մարդիկ զարմանում են՝ կարդալով այդպիսի յայտարարութիւն եւ մինչեւ անգամ տարօրինակ են գտնում, որ մի խմբագրութիւն տպել է այն իր լրագրում։

Ակներեւ է, որ այդտեղ խստում է դարաւոր նախապաշարմունքը եւ ստրկամիտական ընազդը, որ չը նայելով մեր քրիստոնէութեան, մեր քաղաքակրթութեան եւ նոյն իսկ մեր ազատամտութեան, կենդանի է մեր մէջ, մեր ամենքիս մէջ, որ բախտի բերմամբ ծառայ չենք, այլ ծառայատէր։

Մենք դեռ չափազանց ասիացի ենք մնացել եւ չենք սովորել նայել ծառաների վրա այնպէս, ինչպէս նրանց վրա նայում են Եւրոպայում, այն է՝ իբր այնպիսի մարդկանց վրա, որոնք ծախում են մեզ իրանց աշխատանքի որոշ ժամերը։ Ոչ. մենք, նոյն իսկ ինտելիգէնտներս, ծառայ վարձելով, հաւատացած ենք լինում, թէ որոշ իրաւունքներ ենք ձեռք բերում ծառայ վարձվողի անձնաւորութեան վրա, իրաւունք նրան անպատուելու, ստորացնելու, հայհոյելու, եթէ ոչ ծեծելու։

Ժամանակ է, որ մենք թողնենք այդ հնացած եւ անարդար հայեացքը։ Ժամանակ է, որ ծառաները իրանք սովորեն յարգել եւ յարգել տալ իրանց անձնաւորութիւնը։ Այն կրօնը, որ մեր դաւանում ենք, այն օրէնքները, որոնց մենք ենթարկված ենք, եւ այն քաղաքակրթութիւնը, որով մենք սիրում ենք պարծենալ, ճանաչում են ծառայի մարդկային անձնաւորութիւնը։ Ի՞նչն է մեզ խանգարում յարգել այդ անձնաւորութիւնը։ Ծառաների պակասութիւնները։ Բայց չէ՞ որ ծառատէրերն էլ անաբրատ հրեշտակներ չեն, եւ վերջապէս չէ՞ որ մարդկանց բարոյապէս բարձրացնելու ամենալաւ միջոցը նրանց անձնաւորութիւնը յարգելն է։

Այսպէս թէ այնպէս, վրացի ծառաների արածը, իմ կարծիքով, աչքի ընկնող երեւոյթ պէտք է համարվի Կովկասի ներքին կեանքում, իբր մի ցուցարար հասարակական որոշ մեծ խմբի բարոյական զարգացման։

Տ. Ց.

ՄԻՆԻՍՏՐ ԲՈԳՈԼԷՊՈՎ

—

Երէկ հեռագիրը լուր բերեց, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլէպով վախճանվեց։ Արդէն հեռագրական բիւլետէններից երեւում էր, որ մինիստրի վախճանը այլ կերպ չէր լինելու։

Ահա մի քանի կենսագրական տեղեկութիւններ հանգուցեալ մինիստրի մասին, որ մենք քաղում ենք Բրօկհաուզի բառարանից։

Նիկոլայ Պավլովիչ Բոգոլէպով, ցիվիլիստ, Մոսկվայի նահանգի ընակիչ, ծնվել է 1847 թւին. 1872 թւին աւարտելով իր ուսման ընթացքը Մոսկվայի համալսարանում, հետեւեալ տարին նոյն համալսարանում նշանակվեց հռոմէական իրաւունքի կողմնակի դասատու։ «Համաժողովրդային քաղաքացիական իրաւունքը հռոմէական կլասիական իրաւաբանութեան մէջ» վերնագրով դիսերտացիայի համար Մոսկվայի համալսարանը տուեց նրան քաղաքացիական իրաւունքի մագիստրոսի աստիճան։ Բոգոլէպով նոյն տարին արտասահման ուղարկվեց երկու տարով գիտնական նպատակով։

Մոսկվա վերադառնալուց յետոյ Բոգոլէպով 1878 թւին սկսեց հռոմէական իրաւունքի պատմութեան դասախօսութիւններ կարդալ եւ 1881 թւին «Կտակների ազատութեան ձեւական սահմանափակումներ հռոմէական կլասիական իրաւաբանութեան մէջ» դիսերտացիայի համար ստացաւ քաղաքացիական իրաւունքի դոկտորի աստիճան։ Նոյն տարին, համալսարանի ընտրութեան համաձայն, օրդինար պրոֆէսոր նշանակվեց։ 1883 թւին Մոսկվայի համալսարանի խորհուրդը Բոգոլէպովին ռեկտոր ընտրեց եւ նա այդ պաշտօնը պահպանեց 1884 թ-ի համալսարանական նոր կանոնագրութիւն մրցնելուց յետոյ էլ։ Ապա մի առժամանակ Մոսկվայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու նշանակվեց եւ կոմս Դէլիանովի մահից յետոյ նշանակվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բաւականաչափ լրացրել է այն գրքերի ցանկը, որոնք կարող են կարդացվել ժողովրդական գրադարաններում եւ ընթերցարաններում։ Նոր ցանկը լոյս կը տեսնի հեռաւեալ ուսումնական տարվայ սկզբին։

—

Հայոց դերասանական խումբը ուրբաթ, մարտի 2-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան թատրոնում ներկայացրեց «Իզէիլ» դրաման։ Պիեսի մէջ դուրս է բերված Բուդդայի կեանքի մի էջը, որտեղ դեր է կատարում զեղեցկուհի Իզէիլը։ Պիեսի մէջ կան հետաքրքրական կէտեր, որոնք պահանջում են դերակատարներից մեծ հմտութիւն։ Այդպէս, հետաքրքրական է այն տեսարանը, ուր իշխան Սիդդարտան (ապագայ Բուդդան) վերածնվում է եւ թողնելով իշխանական ապարանքը, որոշում է գնալ ժողովրդի մէջ գործելու։ Պեսրոսեան, որ կատարում էր Բուդդայի դերը. մրսեցրել էր իրան եւ կորցրել իր ձայնը, ուստի անկարող եղաւ լիակատար ազատութեամբ կատարել իր դերը։ Իզէիլի դերը կատարում էր տիկին Սիրանոյշ, որ այդ դերի մէջ կարողութիւն ունէր ցոյց տալ իր դերասանական ընդունակութիւնները։ Իզէիլը նախ ներկայանում է իբրեւ թեթեւ, զուարճասէր մի զեղեցկուհի, որին հրապուրում է տղամարդկանց յաղթելու նրա դիւթական ոյժը, յետոյ իբրեւ մի սիրող եւ անձնուէր կին, որ ամեն տեսակ զոհաբերութիւններ է յանձն առնում իր պաշտած Բուդդայի համար եւ վերջապէս մի կին, որ պաշտպանում է իր կանացի պատիւը։ Տիկին Սիրանոյշը աջողութեամբ պատկերացրից բոլոր նրբութիւնները, ցոյց տալով մի եւ նոյն ժամանակ ամեն տեղ կանացի քնքոյշ եւ դիւրազգաց բնաւորութիւն։ Տպաւորութիւն գործեց այն տեսարանը, երբ նա ժաքառում է վաճառող իշխան Սինտիայի դէմ, ազատում է իր կանացի պատիւը սպանութեամբ եւ յետոյ ողբում է իր կատարած ոճիրը։ Բնորոշ էր Վրոյր՝ Եօդդա անապատականի դերում, որ պիէսի մէջ մի ներքին զսպանակի պաշտօն էր կատարում։ Վրոյր ստեղծել էր մի բաւարար տիպ եւ այդ տիպից չէր շեղվում։ Պէտք է նկատենք, որ չը նայելով մի քանի հետաքրքրական կէտերին, այնուամենայնիւ Իզէիլի նման պիեսները պէտք է տրվեն ամբողջ թատրօնական սեզօնի մէջ իբրեւ բացառութիւններ։ Իսկ Բագուի թատրօնական խումբը մինչեւ այժմ մեզ կերակրում է այդ տեսակ պիեսներով։ Առանց այդ էլ հայ դերասանները փչացրել են իրանց ճաշակը «Շուշանիկ», «Արշակ երկրորդ» «Սանդուխտ» եւ այդ տեսակ ողբերգութիւնների տրադիցիաներից, իսկ «Սաֆո», «Իզէիլ» պիեսները նորից տանում են մեր դերասաններին դէպի քարոզ, ճառ, ճոռոմաբանութիւն, որից պէտք էր վերջապէս ազատվել։

—

Մեզ հաղորդում են, որ բժիշկ Ալ. Խատիսեան, հինգշաբթի օր, մարտի 8-ին, Թիֆլիսի Կրուժոկի դահլիճում կը կարդայ ռուսերէն լեզուով դասախօսութիւն «Ժողովրդական տների» մասին։ Մուտքը ձրի է։ «Մշակի» ներկայ համարի յայտարարութիւնների բաժնում տպագրում ենք այդ դասախօսութեան ծրագիրը։

—

«Новое Время» լրագրում կարդում ենք. «Շաբաթ, փետրվարի 24-ին, սկսվեցին առանձին խորհրդակցութեան աշխատանքները, նախագահութեամբ երկրագործութեան մինիստր Երմոլովի, քննելու համար այն հարցերը, որոնք վերաբերում են նաւթային գործերին։ Առաջին ժողովում քննութեան ենթարկվեց պետական նաւթաբեր հողաբաժինները առանց աճուրդի ցանկացողներին տալու հարցը։ Խորհրդակցութիւնը այդ հարցը վճռեց դրական ժաքով՝ համաձայն 1900 թւի մայիսի 14-ին երկրագործութեան մինիստրի տուած լիազորութիւնների։ Որոշվեց հէնց այժմ կազմել 82 հողաբաժիններ, որոնցից 76-ը Ապշէրոնեան թերակղզում, իսկ 6-ը Բագուի դաւառի ուրիշ կէտերում։»

—

Ծովային մինիստրութիւնը կազմակերպում է այժմ մասնագէտներից բաղկացած մի յանձնաժողով, որ այս տարվայ ընթացքում կուղարկվի հետազօտելու Վոլգա եւ Դոն գետերի, նոյնպէս եւ Կասպից, Ազովեան եւ Սեւ ծովերի այն տեղերը, որոնք վտանգաւոր են նաւագնացութեան համար։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Այսօր, փետրվարի 28-ին, Թիֆլիսից մեր քաղաքը վերադարձաւ տեղիս փոխանորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը։ Ինչպէս լսեցինք, հայր Կիւրեղը

բերնին էր ընկել Գաբօենց օջղէն աղջիկ հանէր։

Եւ գիւղացիներից մէկը սկսեց մանրամասն պատմել, թէ ինչպէս յիշեալ աղջկայ հայրը վռնդում է մի աղքատ տղայի (որի վրա աղջիկը սիրահարված է լինում) խնամախօսներին եւ ապա միւս հարուստ պատգամաւորների հետ ծախու կովի պէս սակարկում իր սեփական աղջկայ «բաշլըղը» (գլխագին)։ Միմեանց դէմ մրցող հարուստ պատգամաւորներից մէկը վերջապէս բարձրացնում է գինը մինչեւ 200 ռուբլի եւ «խօսքն» առնում հօրեղբօրից ու իսկոյն «աչքի լոյս» ուղարկում իրան ուղարկող տղայի տունը, որտեղից վազ տալով գալիս է «թաժայ» խնամին։ Սկսվում է «աչքի լուսի խումը», բայց «անզգամ» աղջկայ լացի ձայնը չեն կարողանում կտրել, որ ոչ մի կերպ չէ ուզում առաջ գալ ու համբուրել նոր կեսարաղ ձեռքը։ Վերջապէս հուժկու եղբայրները երեք հոգով թակելով ու մազերից քաշքշելով, առաջ են բերում աղջիկն ու մի կերպ համբուրել տալիս խնամու ձեռքը։

Ամեն կողմից գոռում են «աչքդ լուս, բարով վայելես», բայց երեք օր չանցած աղջիկն անհետանում է իր սիրած տղայի հետ ոչ միայն հօր տնից, այլ եւ գիւղից։

Սակայն դա մեր գաւառի գիւղական կեանքում այնքան էլ հազուադէպ նորութիւն չէր։ Գիւղացին մեզանում կնոջ վրա նայում է ինչպէս իր կովերի վրա ու այդ երկոտանի «կովերին» աւելի վատ խնամում, քան իր չորքոտանի անասուններին։ Աղջիկը տան մէջ մի փոքր ազատ է ու աւելի լաւ է խնամվում, քան հարսները, որովհետեւ աղջիկը «մսացու» անասունի պէս գին ունի, կարող է ծախվել, այն ինչ հարսներին չէ կարելի ծախել։ Բայց վերջիններս էլ դառնում են վաճառքի ապրանք, երբ մեռնում են ամուսինները։ Այս մասին մի հետաքրքրական դէպք պատմեց գիւղացիներից մէկը։

Գանձայ գիւղում անցեալ տարի մեռնում է Պուլտուղենց Մկիչը ու Ջահել կինը թողնում մայրի։ Գիւղի բոլոր որբեւայրիները սրում են ատամները։ Գալիս են «մուշտարիներ» եւ ուրիշ գիւղերից, բայց «գործը» մինչեւ այժմ գլուխ չէր գալիս։ Վերջապէս գանձայի խոզարածի տղան, որ գիւղի ամենայետին աղքատներից է, սրանից, նրանից 200 ռուբլի պարտք վերցնելով տալիս է հարսի տագրներին ու մի քանի վեղրօ էլ արաղ դէս ու դէն շաղ տալով, հանում է իր «մուրազին»։ Բայց մի շաբաթ չանցած յիշեալ հարսի նոր ամուսինը տեղական հաշտարար դատարանի միջոցով հարսի նախկին տագրներից յետ է պահանջում ոչ միայն իր տուած 200 ռուբլին իբրեւ հարսին տուած ընծայ, որ տագրները իբր զօռով խլել են նրա ձեռքից, այլ եւ հարսի հետ տարած երկու ամսական աղջկայ հայրական բաժինը հօրեղբայրներից։ Իսկ Պուլտուղեանցներն իրանց կողմից իսկոյն քրէական դատ են սկսում Խոզարածեանի դէմ, որ իբր նա այրել է իրանց ցորենի դէզը։ «Ղորթն ու սուսն Աստուած գիտէ», սակայն մի կողմ թողնելով եւ այն թէ սրան, նրան ուտացնելով քանի հարիւր պարտքերի տակ պիտի ընկնեն երկու կողմն էլ, այս դէպքը շատ պարզ կերպով ընորոշում է կնոջ դրութիւնը մեր գիւղերում։

Մինչդեռ ես մտածում էի խեղճ գեղջկուհու անանական դրութեան մասին, շուրջս կէս նիրհող, կէս արթուն գիւղացիները սկսեցին ինչ որ փսփսալ եւ ապա Կարօ տացուն լուրջ, մտազբաղ կերպարանք ընդունելով դարձաւ ինձ.

—Տիրացու Ղ.—ջան, լաւ որ եկար, ցաւերս քեզի չըսենք ո՞ւմ ըսենք. իսկի հողին բանն ինչ՞ղ պիտի ըլի...

Ու Կարօ տացուն սկսեց մանրամասն նկարագրել հողային անիմաստ ու անկանոն դրութիւնը մեր գիւղերում։

Հողը մեզանում, ինչպէս յայտնի է, հասարակութեան սեփականութիւն է, ուստի եւ բաժանվում է «համայնքի» բարեհայեցողութեամբ։ Սակայն մի թէ մեզանում գոյութիւն ունի «համայնք» — հասարակութիւն կոչված բաները։ Երբէք։ Ինչպէս հասարակական բոլոր գործերը, նոյնպէս եւ հողերի շահագործումը, խաղալիք եւ սեփականութիւն են դարձած մի քանի «աղա» անհատների ձեռքին, որոնք իրանց ոսկի ճիրանները ցցած խեղճ գիւղացու սրտում՝ բոլորին գերել, ճորտեր են շինել ու հասարակական գործերը ղեկավարում են մեն մենակ եւ ոչ ըստ համայնքի բարեհայեցողութեան, այլ իրանց գրպանի, սեփական շահի համաձայն։

Ներկայ տարվանից, երբ հարկը հողային դարձաւ ու գաւառիս շատ գիւղերում աւելացաւ, նոյն իսկ կրկնապատկվեց, իւրաքանչիւր գիւղում խիստ զգալի դարձաւ գիւղացիների աղքատ մնծամասնութեան համար հարկի ծանրութիւնը, որովհետեւ գիւղական «աղա» համայնքը պահանջում է նրանից իր չը շահագործած հողի հարկը եւ այն էլ մինչեւ այժմ սովորական դարձած չափից աւելի։

Ես բացատրեցի ինչպէս Կարօ տացուին, նոյնպէս եւ միւս գիւղացիներին, որ փոխանակ խնդրագրերով (որոնց համար նոյնպէս ահագին ծախսեր են անում) այս ու այն կողմ դիմելու, որ հարկը պակասեցվի, թող աշխատեն հողի անարդար բաժանումն ու չահագործումը կանոնաւորել, հողը բաժանել տեսակների (սար, դաշտ, վարելահող, արօտ եւ այլն) եւ ըստ այնմ էլ հարկը բաժանել, համախօսական խելացի վճիռներով չափաւորել գիւղի ամբողջ արօտը ոտնատակ տուող մի քանի անհատների ահագին հօտերը կամ որոշ վարձ պահանջել այդ պիսիներից ու այն ժամանակ այնքան էլ զգալի չի լինի գիւղական ճնշված դասի համար հարկի ներկայ ծանրութիւնը։

Բայց գիւղացիները առաջարկութիւնս ընդունեցին գլխների բացասական շարժումով ու Կարօ տացուն փորձված մարդու լրջութեամբ պատասխանեց.

—«Էհ, տիրացու ջան, ուրիշ բան գիտես, ըսէ, էդիկ ըլելու բան չէ... Ես ինչը՞ Մարտիրոս աղին ըսեմ, թէ քիչ ոչխար պահէ, եա լաւ արտերէդ մէկն ա ինձի տուր, չէ՞ որ էգվան (էգուց) խեղդէ պարտքը կուզէ, տունս կաւրէ...»

Երկար աշխատեցի հասկացնել, որ պարտքն էլ, առնելիքն էլ ունեն իրանց կարգը, օրէնքը, որ պարտապանն անպատճառ պարտատիրոջ ստրուկը, ճորտը չը պիտի լինի ու դրա համար ստիպված ընդհանուրի շահը զոհէ մէկի կամայականութեան, մէկի քէֆին... Բայց իզուր։ «Խեւին խրատ, սեւին սապոնն ինչ անէ։»

Ջաւախեցի

բեղարել եւ ձանձրացել էր մեր Ախալցխայից, ուստի խնդրել է Վեհափառ Հայրապետին, որ իրան ուրիշ տեղ նշանակեն։ Նրա խնդիրքը կատարվել է եւ նա այժմ նշանակվել է Կարսի փոխանորդ, իսկ այնտեղի փոխանորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանը Ախալցխայի փոխանորդ։ Կիւրեղ վարդապետը մօտ երկու տարի է, որ մեզանում փոխանորդ էր, սակայն իր օրերը անցկացրեց անտարբերութեամբ եւ ոչ մի աչքի ընկնող գործ նրա օրով չը կատարվեց, բացի նշանաւոր երէցփոխական խռովութիւններից։ Ժողովրդականներից շատերը նոյն իսկ ձանձրանալով նրա անտարբերութիւնից եւ թուլութիւնից, մի խնդրագիր էին ուղարկել Վեհափառ Հայրապետին տեղափոխելու նրան։ Վերջապէս թէ ժողովրդի եւ թէ հայր Կիւրեղեանի ցանկութիւնները կատարվեցին»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Կիրակի, փետրվարի 25-ին, քաղաքային կլուբի դահլիճում տեղի ունեցաւ մի ռուսերէն կօնցէրտ, յօգուտ վրաց Բարեգործական ընկերութեան տեղական բաժնի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Morning Post»-ի Թղթակիցը գրում է Հռոմից, թէ այն հակակղերական շարժումը, որ տեղի է ունենում այժմ եւրօպական շատ պետութիւնների մէջ, կենտրօնացրել է իր վրա Վատիկանի առանձին ուշադրութիւնը։ Կաթոլիկ եկեղեցականները մինչեւ անգամ կարծիք են յայտնում, թէ այդ շարժումը հետեւանք է միջազգային դաւադրութեան, որին չեն մասնակցում միայն Իտալիան եւ բողոքական մեծ պետութիւնները։ Ֆրանսիական կառավարութեան յարուցած հալածանքը կրօնական միաբանութիւնների դէմ, հակակղերական ցոյցերը Սպանիայում եւ Պորտուգալիայում, նոյնպէս եւ կաթոլիկների դէմ ուղղված շարժումը Աւստրօ-Ունգարիայում եւ Բելգիայում համարվում են այդ դաւադրութեան նշանները։ Վատիկանից կաթոլիկ եպիսկոպոսների դասին ուղարկված են ամեն տեղ հրահանգներ, որոնցով պատուիրվում է նրանց խուսափել այնպիսի ընդհարումներից, որոնք կարող են առիթ տալ թշնամական ցոյցերի կաթոլիկ հոգեւորականութեան դէմ։ Իբրեւ պատասխան ֆրանսիական կառավարութեան՝ Վատիկանը պատրաստութիւններ է տեսնում սրբերի կարգը դասելու այն քահանաներին, որոնք սպանված են Պարիզում 1791 թուականի սեպտեմբերի կոտորածների ժամանակ։

—«Francfurter Zeitung» լրագրի Թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից, թէ ռուսաց կառավարութիւնը յայտնեց Բոլգարիային, որ Ռուսաստանը ոչ մի դէպքում թոյլ չի տայ մակեդոնական կոմիտէին վրդովել խաղաղութիւնը Բալկանեան թերակղզում, ուստի եւ բոլգարական կառավարութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնէ այն բարդութիւնների առաջն առնելու, որոնք կարող են ծագել Մակեդոնիայում։ Սոֆիայի ռուսական հաւատարմատար Բախմետեվի դիմումները այս հարցի վերաբերմամբ հակակրական արձագանք գտան բոլգարական ղեկավարող շրջաններում, որոնք եւ միջոցներ ձեռք առան խաղաղութիւնը պահպանելու համար։ Ի նկատի առնելով Ռուսաստանի այս վարմունքը՝ սուլթանը, Պետերբուրգի իր դեսպանի միջոցով, խնդրեց շնորհակալութիւն յայտնել ռուսաց Կայսրին եւ ցանկութիւն, որ այսուհետեւ եւս բարեկամութիւնը Ռուսաստանի եւ Թուրքիայի մէջ շարունակվի։

—Գերմանական լրագիրները հաղորդում են զանազան մանրամասնութիւններ այն ցոյցերի մասին, որոնք տեղի ունեցան անգլիական թագաւոր Էդուարդ VII-ի դէմ, երբ նա վերջին անգամ այցելեց Գերմանիան։ Ի միջի այլոց, Դիւսէլդորֆ կայարանում, երբ Էդուարդ VII վագօնից դուրս գալով գնում էր դէպի կայարան, ամբոխի միջից լսվեցին աղաղակներ. «դուրս, դուրս»։ Այս ցոյցի յանցաւորներին չաջողվեց գտնել, չը նայելով ոստիկանութեան ջանքերին. տուժեց միայն կայարանի կառավարիչը, որին փոխադրեցին ուրիշ կայարան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Մի տանջանք է մեր փողոցներում մանգալը։ Այնտեղ, ուր սալայատակ չը կայ, քիչ է մնում ոտքերդ կոտրես։ Իսկ այնտեղ, ուր սալայատակված է եւ լաւ մայթեր կան, այնտեղ էլ կանանց զգեստներն են փոշի բարձրացնում։ Այն էլ մանրամազ ավազի նման, խեղդող փոշի։

Կարծեմ կարելի էր այնպէս բարեփոխել կանացի զգեստը, որ փոշու քուլաներից մենք ազատ լինէինք։

Եւ այդտեղ հարկաւոր չէ մեծ յեղաշրջումներ եւ խոշոր փոփոխութիւններ կատարել։

Մենք այժմ այնպիսի արմատական յեղափոխութեան մասին չենք խօսում, ինչ որ ցանկանում են, իրագործել, օրինակ, Անգլիայի մի խումբ կանայք։

Դա դեռ շատ ջուր կը քաշի։

Մենք այն բանի մասին ենք խօսում, որ կարելի է հեշտութեամբ իրագործել։

Ի դէպ, Անգլիայի այդ կանանց մասին։

Լօնդօնում գոյութիւն ունի կանանց մի ընկերութիւն, որի գլխաւոր նպատակն է բարեփոխել կանացի զգեստը։

Այդ ընկերութեան անունն է Rational Dress League, այսինքն «Խելացի զգեստի միութիւն»։

Մի քանի ամիս սրանից առաջ այդ ընկերութեան անդամուհիները մեծ հետաքրքրութիւն եւ զուարճութիւն պատճառեցին Լօնդոնի Բէյսուոթեր թաղի բնակիչներին։

Ընկերութեան բազմաթիւ անդամուհիները՝ հագած տղամարդու անդրավարտիկներ՝ անցնում էին փողոցներով։ Գնացքը կատարվում էր հանդիսաւոր կերպով։ Կանայք ունէին լուրջ եւ յաղթական հայեացք։ Նրանց մէջ կային բարձր դիրքի ընտանիքներից շատ անձինք, որոնցից մի քանիսը ճառ խօսեցին այդ օրվայ ժողովում։

Վիկտորիայի Հարբերտսն իր գեղեցիկ կազմած ճառի մէջ ցոյց էր տալիս, որ կանացի զգեստը, բարձրացնելով փոշի, վնասում է մարդկանց առողջութեան, որ նա փողոցից դէպի տուն է տեղափոխում կեղտ եւ հիւանդութիւն, որ նա զրկում է կին մարդուն ազատ շարժումներից եւ որ նոյն իսկ նա պատճառ է կանանց աւելի ստոր վիճակին՝ տղամարդու հետ համեմատած։

Խօսում էին եւ ուրիշները։ Մանաւանդ խիստ կերպով խօսվեց կօրսետի դէմ։

Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց դէն գցել գերիան եւ ընդունել տղամարդու անդրավարտիկը։

«Կեցցէ անդրավարտիկը — կեցցէ bloomers» աղաղակում էր եւ ծափահարում կանանց ընկերութիւնը։

Ի միսիթարութիւն մեր կովկասցիների կարող եմ յայտնել, որ Կովկասում կան տեղեր, ուր փոքր ի շատէ իրագործված է անգլիական կանանց ընկերութեան տենչանքը։

Ես աչքի առաջ ունեմ Դաղստանը։ Այնտեղ կանայք պարտաւոր են կատարել իրանց դաչտային բոլոր գործերը եւ վաղուց յարմարեցրել են այդ բանի համար իրանց զգեստը։ Նրանք աշխատանքի ժամանակ հագնված են այնպէս, որ ազատ կարող են շարժվել։

Դաղստանի այդ կանայքը կարող կը լինէին անգլիական Rational Dress League ընկերութեան պատուաւոր անդամուհիներ ճանաչվել առմիշտ։

—

Ես հեռու գնացի եւ Թիֆլիսի փոշին մոռացայ։

Քաղաքային վարչութիւնը պարտք է համարում փողոցները ջրել, որպէսզի փոշին պակաս լինի։

Բայց ջրողները այնպէս անշնորհք են ջրում, որ մարդ այլ եւս չէ կարողանում փողոցով անցնել։

Քիչ է մնում, որ մարդ ամենաչոր եղանակին էլ կրկնակօշիկներ հագնէ յատկապէս քաղաքի ջրած փողոցներով անցնելու համար։

Շատ հականալի է, որ որոշ կէտերում փողոցը պէտք է ցամաք պահվի անցորդների համար։

Այդ կէտերը կան եւ յայտնի են. բայց ոչ ոք չէ ուզում նրանց վրա ուշադրութիւն դարձնել։

Ամեն օր զբօսնողները վէճի են բռնվում այդ առիթով ջրողների հետ։

Այնպէս է թւում, թէ դուք համոզեցիք ջրողներին եւ նրանք ձեզ հասկացան։ Բայց նոյնը կրկնվում է եւ հետեւեալ օրերը։

Այդպէս անվերջ։

—

Փողոցի ցեխից եւ մայթերի փոշից ազատվելու նպատակով երէկ ես նստեցի ձիաքաշի կառքը։

Բայց այդտեղ էլ ինձ հանգիստ չը թողեց ձիաքաշի ծառայողների վերահսկողը, կօնտրոլիորը։

—Ցոյց տուէք ձեր տոմսակը, դիմեց նա ինձ։

Ես որոնեցի, գտայ եւ ցոյց տուի։

—Տուէք ինձ, ասաց նա։

—Միթէ բաւական չէ, որ տոմսակ ունեմ, նկատեցի ես։

—Ոչ, ես պէտք է ինքս տեսնեմ, մրթմրթաց նա։

—Համեցէք։

Վերահսկողը վերցրեց տոմսակը, տնդղեց եւ յետոյ մի փոքր պատեց ու վերադարձրեց ինձ։

—Ինչու՞ պատռեցիք, հետաքրքրվեցի ես։

—Ստուգութեան համար, ասաց նա ու դիմեց հարեւանիս։

Զարմանալի է։

Զարմանալի է այն պատճառով, որ այդ կօնտրոլիորները, ինչպէս երեւում է, ձիաքաշի ծառայողներին ստուգելու համար չեն նշանակված, այլ հասարակութիւնը ստուգելու եւ նրան վերահսկելու։

Զարմանալի է (եթէ գործ չածենք աւելի արժանաւոր ածական)։

Սակայն միթէ այդպիսի հսկողութիւն գործադրվում է եւ այն երկրներում, որտեղից ձիաքաշը եկել է մեր կողմերը։

Ի հարկէ, ոչ։

Ի հարկէ, երբէք։

Այնտեղ յաճախ տոմսակներ էլ գոյութիւն չունեն. իսկ կան դէպքեր, երբ վճար պահանջողներ էլ չը կան։

—Ինչպէս, կը հարցնէք դուք։

—Ահա ինչպէս, կը բացատրեմ ես։ Կառքի մի ծայրում դրված է մի արկղ, որի մէջ իւրաքանչիւր մարդ ինքը զցում է սահմանված վճարը։

Այնտեղ հաւատ կայ դէպի հասարակութիւնը, հաւատ դէպի մարդկանց շիտակութիւնը։

Թողնենք այդ դեռ մեզ համար գուցէ անյարմար ձեւը։ Բայց գոնէ մի զզուեցրէք մեզ ձեր անվերջ կօնտրոլներով։

Ստուգեցէք ձեր պաշտօնեաներին, բայց ոչ մեզ։

Կարծեմ պարզ է։

Սակայն ինչպէս կարելի է։ Կօնտրոլիորն էլ մի իշխանութիւն է։ Ինչու՞ նա իր ոյժը չը փորձէ ամեն մի քաղաքացու վրա, որին վիճակվել է ձիաքաշի կառքը նստել։

—Ահա, ես ինչ ոյժ ունեմ, ասում են ձեզ նրա դէմքը եւ աչքերը. ես իրաւունքներ ունեմ. կարող եմ նոյն իսկ վայր իջեցնել կառքից, եթէ պատուէրս չը կատարէք եւ տոմսակը չը տաք։

—

Ձիաքաշի հարեւանս, որի հետ խօսեցինք ձեւականութիւնների եւ ցիմար ձգձգումների մասին, պատմեց ինձ հետեւեալ եղած կամ գուցէ հնարած դէպքը։

Մի բարեգործական ընկերութեան խնամքին ուղարկված էին երեք քոյր որբեր յանձնարարական նամակով։ Ընկերութեան գործավարը կարդաց յանձնարարականը, նայեց թշուառ աղջիկներին, դարձեալ կարդաց յանձնարարականը, ճակատը տրորեց, նայեց խեղճերին, մրտածմունքի մէջ ընկաւ, նորից կարդաց յանձնարարականը եւ յետոյ դարձաւ սպասող աղջիկներին.

—Դուք հարազատ քոյրեր էք, հարցրեց նա։

—Այո, պատասխանեցին նրանք։

—Քո անունը՞։

—Զմրուխտ։

—Քոնը՞։

—Գոհար։

—Քոնը՞։

—Ալմաստ։

—Երեք թանգագին քարեր՝—զմրուխտ, գոհար եւ ալմաստ։ Այդպէս ասացիք չէ՞, հարցրեց գործավարը։

—Այո։

—Միթէ երեքդ էլ որբ էք, շուարած եւ կարծես վրդովված հարցրեց գործավարը։

—Այո։

—Երեքդ էլ։

—Այո։

—Որքան ցաւալի է, մրմնջած գործավարը։ Երեքդ էլ որբ, երեքդ էլ որբ, երեքդ էլ որբ...

—Ինչպէս կը հրամայէք մեզ ընդունելու մասին, հարցրեց մեծ քոյրը։

—Կարող ենք օգնել միայն ձեզնից մէկին։ Այո։ Աւելին անկարելի է։

—Ի՞նչ էք ասում, ճչացին խեղճերը։

—Շատ-շատ, կարելի է երկուսիդ, ասաց յուսահատ ձայնով գործավարը։

—Իսկ երրորդին։

—Անկարելի է. բոլորովին անկարելի է։

—Ապա նա ուր գնայ, ինչ անէ, հարցրեցին աղջիկները։

—Նա ուր գնայ, նա ուր գնայ։ Ձիշդ հարց է։

Այն ժամանակ նրան կը վերցնենք, իսկ ձեզնից մէկին կը մերժենք։

—Միթէ այդ մի եւ նոյնը չը դուրս գայ, բացականչեցին աղջիկները։ Ո՞ւր գնայ մերժվածը։

—Այդ էլ ճիշդ է, վրա բերեց գործավարը, բաւական դժուար հարց է եւ, ըստ երեւոյթին, անվերջ։ Այնպէս է դուրս գալիս, որ պէտք է երեքիդ էլ ընդունենք։

—Խնդրում ենք, աղաչում ենք, աղերսեցին որբերը։

—Հը՞։

—Խնդրում ենք, կրկնեցին թշուառները։

—Լաւ, թող այդպէս լինի։

Եւ այդպէս էլ եղաւ։ Ընդունվեցին երեքն էլ։ Ընդունելը դժուար չէր, որովհետեւ դեռ էլի մի ութ հոգու համար ազատ տեղ կար հիմարկութեան մէջ։

—

Հարեւանս վերջացրեց իր պատմութիւնը։

—Ուրեմն, ինչու էր հարկաւոր գործավարին այդքան խօսք ու զրոյց, հարցրեցի ես։

—Ինչու։ Որպէս զի ցոյց տայ, որ այնքան էլ հեշտ չէր մտնել արքայութիւն եւ որ արքայութեան բանալիները իր ձեռքումն են։

Վրձին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

2 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 2-ին, ցերեկվայ 2 ժամին, վախճանվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգօլէպով։ Երեկոյեան 8 ժամին հանգուցեալ մինիստրի համար կատարվեց առաջին հոգեհանգիստը, որին ներկայ էին զինուորական, արդարադատութեան, հաղորդակցութեան ճանապարհների եւ ներքին գործերի մինիստրները, շատ բարձրաստիճան անձինք եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան անդամները։

Կարպովիչի գործի քննութիւնը ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կեանքի դէմ փորձ անելու մասին, որ նշանակված էր մարտի 3-ին Պետերբուրգի դատաստանական պալատում, յետաձգված է։

ՎԻԵՆՆԱ, Պետերբուրգից հաղորդագրութիւնը «Polit. Correspondenz» լրագրում, որ ներշնչված է հեղինակաւոր աղբիւրից, ասում է, որ չը նայելով այն ուշադրութեանը, որ նա դարձրել է ռուսաց երկաթուղիական շահերը պաշտպանելու վրա Մանջուրիայում, ռուսաց կառավարութիւնը աչքաթող չէ անում իր դրութիւնը որպէս պետութիւնների կենտրոնի անդամի, եւ պետութիւնների ընդհանուր պահանջների կատարումը Մանջուրիան կամաց կամաց մաքրելու պայմաններից մէկը դրեց, դրանով ճնշում գործելով չինական կառավարութեան վրա պետութիւնների ընդհանուր շահերի համար։

ՍՕՖԻԱ։ Լուրերին նայելով, ներքին գործերի մինիստրը հրամանագրեց խլել զէնքերը մակեդոնական հրացանաձիգ ընկերութիւններից եւ արգելել նրանց զինուորական վարժութիւնները։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէրի հեռագիրը Պրետորիայից հաղորդում է. «Ֆրէնչ հաղորդում է ի լրումն նախկին հաղորդագրութեան, որ էլի 46 բօէրներ սպանված են եւ վիրաւորված, 146 գերի են առնված կամ անձնատուր եղան։ Բացի սրանք էլի 200 զէնքեր, 2700 փամփուշտներ, 2400 ձիեր, 140 ջորիներ, 370 լծկան եզներ, 2500 զլուխ տաւար եւ 400 սայլեր։ Անձրեւային եղանակ է, է տիրում, որ դժուարացնում է զօրքերի ասաջ ընթանալը։

3 մարտի

ԲԵՐԼԻՆ։ Կայսերական սէյմ։ Լրացուցիչ կրէդիտի առաջին ընթերցումը չինական արշաւանքի համար։ Կայսերական կանցլէրն ասաց. «Բոլոր պետութիւնները ձգտում են այն բանին, որպէս զի գործերը Չինաստանում հաստատ հողի վրա դնեն, բայց այնու ամենայնիւ գոյութիւն ունեն տարաձայնութիւններ, որոնք առաջացած են հէնց իրերի բնութիւնից։ Կան պետութիւններ, որոնց շահերը Չինաստանում ըստ էութեան անտեսական են եւ կան այնպիսիները, որոնք այնտեղ աւելի քաղաքական նպատակներին են հետեւում։ Մենք առաջին տեսակին ենք պատկանում, այդ պատճառով էլ մենք համաձայնութիւն կայացրինք Անգլիայի հետ, ի նկատի ունենալով նախ եւ առաջ Չինաստանի ամբողջութիւնը պաշտպանելու հնարաւորութիւնը. միւս կողմից—յանձն առնել Չինաստանում պարտաւորութիւն միմիայն այնքան, որքան դա անհրաժեշտ է մեր առեւտրի համար։ Այդ համաձայնութիւնը Մանջուրիային չէ վերաբերվում, որ երեւում է նրա բնագրից, որը չէ պարունակում ոչինչ գաղտնի պայմաններ եւ յօդուածներ։ Ես արդէն մի քանի անգամ յայտնել եմ, որ համաձայնութեան վերաբերեալ բանակցութիւնների ժամանակ մենք ոչ մի կասկած չը թողինք այն բանում, թէ չենք տարածում նրան Մանջուրիայի վրա. մի կողմից անտեղ ուշադրութեան արժանի գերմանական շահեր չը կան, միւս կողմից—մեր շահը պահանջում է, որպէս զի Չինաստանը ներկայումս անյարմար կերպով չը փոքրացնէ իր պետական գոյքը։ Չինաստանը պետութիւնների պարտապանն է բաւական նշանաւոր գումարով, որը իր պարտատէրերի հետ բանակցութիւններ է վարում, բայց դեռ ես համաձայնութիւն չէ կայացրել նրանց հետ։ Պարտատէրերը հետաքրքրված են այն բանով, որպէս զի Չինաստանը խիստ շատ չը տայ ի վնաս իրանց։ Քանի որ Չինաստանը հաւաքական յայտագրի պայմանները չէ կատարել, մենք դժգոհութեամբ կը նայենք ամեն տեսակ համաձայնութեան վրա, ում հետ էլ կապէ նրանց Չինաստանը, եթէ այդ համաձայնութիւններով նշանաւոր չափով խախտված կը լինի երկրի ֆինանսական ընդունակութիւնը։ Բոլոր պետութիւնները հանդիսաւոր խոստումներ տուին, թէ չեն հետեւում Չինաստանում ոչ մի առանձին նպատակի. այդ դէպքում նրանց ղեկավարում էր էլի եւ այն հանգամանքը, որ մասնաւոր ընկերութիւնները սկսեցին խաբէութեամբ ձեռք բերել Չինաստանից ամեն տեսակ կոնցէսիաներ։ Եթէ գործը այդպէս անվերջ շարունակվէր, այն ժամանակ Չինաստանը վերջ ի վերջոյ կը դառնար մի քամած լիմոն եւ մենք ոչինչ չէինք ստանայ նրա հիւթից։ Խօսում էին Գերմանիայի առանձնացած դրութեան մասին Չինաստանում եւ թէ մենք այս կամ այն օտար պետութեան պաշտպանութեան կարիք ունենք։ Ճիշդ չէ թէ առաջինը եւ թէ երկրորդը։ Առանձնացած դրութեան մասին այն պատճառով արդէն խօսք չէ կարող լինել, որ մենք մեր ջանքերը գործ դրինք պետու-

թիւնների կենտրոն պահպանութեան վրա եւ այն էլ աջողութեամբ։ Մենք վէճի կարիք չէինք զգում այն պատճառով, որ երբէք առանձին պահանջներ չէինք դնում։ Խօսում էին նոյնպէս, թէ չինական գործի պատճառով մենք վատացրինք մեր յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, բայց այդ էլ ճիշդ չէ։ Գերմանիան ըստ էութեան տնտեսական, կուլտուրական նպատակներին է հետեւում Չինաստանում, Ռուսաստանը նոյնպէս կուլտուրական բնաւորութիւն ունեցող նպատակներին է հետեւում, բայց մի եւ նոյն ժամանակ եւ մի քանի քաղաքական նպատակներին, այն է Չինաստանի հիւսիսում։ Գերմանական եւ ռուսական նպատակները շատ լաւ կարող են գոյութիւն ունենալ միմեանց կողքին։ Խիստ կամ անհաշտ հակասութեան մասին հօ աւելի էլ քիչ խօսք կարող է լինել երկու պետութիւնների մէջ Չինաստանում, ինչպէս եւ ամեն տեղ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ենթադրված ալբանական ազգային ժողովը վերացված է, Իլդիզ-Քիոսկից տեղական իշխանութիւնների ստացած կարգադրութիւնների պատճառով։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Կտրված է հեռագրական հաղորդակցութիւնը Նատալի արեւելեան մասի հետ. բօէրները կտրեցին հեռագրաթելը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի Կէմպբէլ-Բաննէրման առարկում է Բրոդրիկի զինուորական բէֆորմների դէմ։ Նա նրանց դէմ է այն պատճառով, որ նախկին իմաստուն քաղաքականութիւնից յետ քաշվելը համազոր կը լինէր զինուորական ոգի մոցնելուն, որ անխուսափելի կերպով կը փոխէ ազգի եւ կայսրութեան բնաւորութիւնը։ Հարկաւոր բողոքում է Անգլիան զինուորական ազգ դարձնելու փորձերի դէմ։ Բալֆուր առարկում է, թէ Անգլիայի պատասխանատուութիւնը աճել է, թէ Անգլիան պէտք է պաշտպանէ ընդարձակ միապետութիւնը։ Դաշնագիրներ կան նոյնպէս, որոնք կապված չեն եղել այժմեան կառավարութեան ձեռքով։ Չէ կարելի իմանալ, թէ երբ Անգլիան կը հրաւիրվի կատարելու այդ դաշնագիրները։ Բրոդրիկի նախագիծը կարող էր ապահովել խակաղութիւնը, որի վրա Անգլիան երբէք չէ կարող հաւատացած լինել, եթէ չի վայելի պետութիւնների յարգանքը, որոնք Անգլիայի հետ բարեկամ են, թէպէտ մի քանի տեսակէտից եւ մրցութեան մէջ, բայց որոնք կարող են նրա թշնամիները դառնալ։

ԼՕՆԴՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը հրատարակեց մի կոչ, որի մէջ այն բոլոր անձինք, որ պահանջներ ունեն Չինաստանից, որոնք կապ ունեն այնտեղ տեղի ունեցած անկարգութիւնների հետ, հրաւիրվում են հաղորդել մանրամասնութիւններ նրանց մասին, որովհետեւ ներկայումս Պէկինում քննվում է վարձատրութեան վերաբերեալ հարցը։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի ժողովի Ուօլսլէյ վերադառնում է Լանդզդաունի քննադատութեանը եւ յայտնում է, թէ այն պատճառով չը գնահատեց բօէրների պատերազմական ոյժը պատշաճաւոր չափով, որ բօէրների ցոյց տուած յամառութիւնը հակասում էր նախկին փորձին։ Դրանից յետոյ նա պնդում էր կամաց կամաց եւ աննկատելի կերպով օգնական զորքեր ուղարկել հարաւային Աֆրիկա եւ 1899 թուի յունիսի 8-ին առաջարկեց մի ամբողջ զօրաբաժնի մոբիլիզացիա, ենթադրելով, որ դա նշանաւոր տպաւորութիւն կը գործէ հարաւային Աֆրիկայում։ Ուօլսլէյ վերջացրեց իր ճառը պահանջելով, որ հրատարակվեն իր կազմած զեկուցումները, որոնք կապ ունեն այժմեան վիճաբանութիւնների հետ։ Լանսդաուն պատասխանում է, որ Ուօլսլէյ գլէնկոի մօտ պարտութիւնից յետոյ միայն առաջարկեց յետ քաշվել Տուգէլլի այն կողմը, բայց այն ժամանակ արդէն շատ ուշ էր։ Ուօլսլէյի վրա պէտք է դրվի ամբողջապէս պատասխանատուութիւնը։ Կառավարութիւնը չէր կարող ընդունել Ուօլսլէյի առաջարկութիւնը, որովհետեւ նա (կառավարութիւնը) խաղաղ քաղաքականութեան էր հետեւում։ Լանսդաուն մերժում է այն զօրու ոյժերի հրատարակութիւնը, որոնց մասին յիշեց Ուօլսլէյը։ Բուռն վիճաբանութիւններից յետոյ Ուօլսլէյի առաջարկութիւնը մերժվեց։

Համայնքների ժողովի Գիկս Բիչ յայտնում է, որ չէ կարող ճիշդ տեղեկութիւններ տալ Չինաստանում պատերազմական գործողութիւնների համար արած ծախսերի վերաբերմամբ, բայց ընդհանուր գումարը պէտք է որ հասնի մօտաւորապէս երեք ու կէս միլիոնին։ Բէդմոնդ հարցնում է. արդեօք թոյլատրված է անգլիական օֆիցերներին, դաշնակիցների մէջ պատահած երկպառակութիւնների դէպքում Չինաստանում, սպառնալ զէնքով եւ ոյժով, առանց նախապէս հարցնելու իրանց կառավարութեան կամքը։ Համիլտոն պատասխանում է, որ անգլիական օֆիցէրները Չինաստանում եղած գործողութիւնների ժամանակ ամեն տեսակ դժուարութիւնների դէպքում չափազանց խաղաղասիրական ոգի էին արտայայտում. մինիստրի ընկերը չէ կարծում, որ հարկաւոր լինէր հրահանգներ ուղարկել նրանց։

ԲԼՈՒՄՖՕՆՏԷՆ։ Դեվէտ ճառ արտասանեց իր կուսակիցների առաջ, որի մէջ յայտնեց, թէ Տրանսվալում անգլիական իշխանութիւնների հետ կատարելապէս ոչինչ բանակցութիւններ տեղի չեն ունենում խաղաղութեան մասին։

ՍՏԱՆԴԷՐՏՕՆ։ Ֆրէնչի հրամանատարութեան տակ գտնվող զօրքերը դաղարեցրին պատերազմական գործողութիւնները Կիչենէրի եւ Բոտայի միջեւ տեղի ունեցող բանակցութիւնների պատճառով։

ԼՕՆԴՕՆ։ Արքայական զոյգը եւ Կօրնուէլեան դուքսը եւ դքսուհին ճանապարհ ընկան Պորտսմուտ։ Այնտեղից թագաժառանգը իր ամուսնու հետ կուզեւորվի երկարատեւ ճանապարհորդութիւն կատարելու նպատակով։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Սատրին պալատում կառավարութիւնը յայտնեց, թէ գործերի իսկական դրութիւնը ի նկատի ունենալով, չէ արդարանում այն լուրը, թէ ռուսական նաւերը բերել են թնդանօթներ եւ շինարարական նիւթեր Մուկֆօ, Կօրէայում, զինաւորելու համար այնտեղի ժարտկոցը։—Կօրէական ֆինանսների մինիստրը կալանաւորված է, որովհետեւ կասկածվում է, թէ դիտաւորութիւն է ունեցել սպանել կայսրի սիրուհուն եւ պալատի ուրիշ կանանց։

ԲԵՐԼԻՆ։ Բիւլօվ իր ճառի մէջ յիշեց դեսպանների կոնֆէրէնցիայում յարուցված հարցերը պատերազմական ծախսերի մասին։ Այդ հարցերը կազմված էին փետրվարի 3-ին եւ ասում էին։ 1) Արդեօք համաձայն են իրանց մէջ պետութիւնները պատերազմական ծախսերը յայտ բերելու եղանակի վերաբերմամբ։ 2) Արդեօք թուանշանը որոշելու ժամանակ պետութիւնները կը գործին միասին մշակած կանոնների համաձայն, թէ իւրաքանչիւրը նրանցից իր սեփական գնահատութիւնը կը տայ։ 3) Պէտք է արդեօք պահանջել միասին մի ընդհանուր գումար, թէ պէտք է առանձին-առանձին պահանջներ անել։ 4) Իտալական եւ աւստրիական դեսպանները հարց յարուցին, թէ արդեօք պատերազմական վնասների համար վարձատրութեան մէջ պէտք է մտցնել նոյնպէս վարձատրութիւն դեսպանութիւնների պաշարման ժամանակ սպանված եւ վիրաւորված զինուորականների համար, թէ այդ վերջին վարձատրութիւնների համար պէտք է հոդ տանեն պետութիւնների ներկայացուցիչները Պէկինում։ Սէյմուրի զօրասիւնի վերաբերմամբ եւս նոյնպիսի հարց զարթեց։ Բիւլօվ պատասխանեց այդ հարցերին հետեւեալ կերպով. չորրորդ հարցի վերաբերմամբ ասված է, թէ նա վերաբերում է պատերազմական ծախսերի համար վարձատրութիւններին, բայց հնարաւոր է, պետութիւնների ներկայացուցիչների միջոցով Պէկինում, առաջուց բաւարարութիւն ստանալ այդ պահանջների համար. երրորդ հարցի վերաբերմամբ ասված է. մեզ թուում է, որովհետեւ մինչեւ այժմ գործողութիւնները միասին են եղել, պէտք է միասին էլ պահանջել ընդհանուր գումարի վճարումը. երկրորդ հարցի վերաբերմամբ՝ մասնաւոր անձանց վարձատրելու մասին, ասված է. մեզ թուում է, որ կարելի է ընդունել իտալական կառավարութեան առաջարկութիւնը եւ աշխատել լուծումն տալ այդ պահանջներին միատեսակ սկզբունքների հիման վրա, խառն յանձնաժողովների օգնութեամբ Չինաստանում. իսկ պետական վնասները փոխարինելու վերաբերմամբ, ընդհակառակը, մեզ անյուսալի փորձ է թուում պայմանաւորվել ընդհանուր կանոնների մասին, այդ պատճառով մնում է միայն, որ իւրաքանչիւր պետութիւն ըստ կարելւոյն ճիշդ ցոյց տայ իր իսկական ծախսերի թուանշանը եւ հաղորդէ նրանց նոյնպէս մնացած կառավարութիւններին։ Այն պահանջների ընդհանուր թուանշանի որոշումը, որոնք պէտք է ներկայացվեն Չինաստանին, այդպիսով պէտք է կառավարութիւնների ամենամօտաւոր խնդիրը լինի, դրանից յետոյ արդէն չինական կառավարութեան գործը կը լինի կարծիք յայտնել այն բանի մասին, թէ ինչպէս է նա մտածում ձեռք բերել այդ գումարը։ Եթէ, որպէս կարելի է նախատեսել, Չինաստանը չի ներկայացնի ընդունելի առաջարկութիւններ, պետութիւնները ստիպված կը լինեն ներկայացնել նրան իրանց ֆինանսական ծրագիրը, որի մասին այն ժամանակ յամենայն դէպս կաջողվի պայմանաւորվել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГАРМОНІИ

Высылаю во всѣ города Россіи какъ своей фабрики, такъ и кустарнаго производства, по самымъ умѣреннымъ цѣнамъ, цѣною отъ 30 коп. до 10 руб. При требованіи прилагать 20 р. задатокъ. Требованіе на сумму менѣе 25 руб. неисполняется. Адресъ: Тула, Веневская улица, магазинъ В. Д. Грецова.

Съ совершеннымъ почтеніемъ
1—10 В. ГРЕЦОВЪ

ՏԱՓԻ-ԹԱՂԻ (Քամոյեանց) ս. Գէորգ եկեղեցու գաւթումը ծախվում է գործածութեան մէջ եղած Վրաստանի հին ագուռ։
1—3

Արձակ լինելով ամարային 3—4 ամիսները պարապմունքներից, կամենում եմ յանձն առնել երգեցիկ խումբ կազմելու եւ խմբի համար էլ կառավարիչ-խմբապետ պատրաստելու գործը ապահով (առաջարկողի համար) պայմաններով։

Դիմել՝ Н. Е. Мѣдникянцу, Астрахань. Армянское Агабабовское училище. (չ.) 4—6

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ՝ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կշտին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։
72—100

ПРОГРАММА
публичной лекціи на тему
„НАРОДНЫЕ ДОМА И ИХЪ КУЛЬТУРНОЕ ЗНАЧЕНІЕ“

1) Общая характеристика ремесленнаго и профессіональнаго труда. Вліяніе труда на духовный и физическій міръ рабочихъ классовъ. Усталость. Моральное и физическое переутомленіе. Апатія, алкоголизмъ и вырожденіе. Двоякое значеніе отдыха. Вліяніе образованія на народныя богатства, здоровье и нравственность. Цѣнность знанія съ экономической точки зрѣнія. Физіологія удовольствій и развлеченій. Физическія упражненія и изящныя искусства, какъ одни изъ факторовъ народнаго благоденствія. Идея народныхъ домовъ и ихъ соціальное значеніе.

2) Возникновеніе первыхъ народныхъ домовъ въ Англіи. Романъ Вальтера Безанта. Университетское поселеніе, University Extention,—какъ формы просвѣщенія народа въ Англіи. Народные Университеты во Франціи, ихъ исторія и современное положеніе. Народные дома въ Сѣверной Америкѣ, Швеціи, Норвегіи, Италіи и ихъ особенности. Народные дома въ Россіи. Возможныя возраженія противъ необходимости и цѣлесообразности народныхъ домовъ. Народный домъ въ Тифлисѣ. Его будущая роль. Заключеніе.
1—1

БАКИНСКОЕ ОТДѢЛЕНІЕ
ТОРГОВАГО ДОМА
АНДРЕЙ БЕНДЕРЪ и С-ЬЯ
Баку, Ольгинская ул., пассажъ Шадинова.
РОЗНИЧНОЕ И ОПТОВОЕ
Всѣ столичныя новости
ГРОМАДНЫЙ ВЫБОРЪ: полотняныхъ и шелковыхъ товаровъ
БѢЛЬЕ, ЧУЛКИ, НОСКИ.
САРПИНКА ВСѢХЪ СОРТОВЪ.

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и К° МОСКВА.
26—52 М. 9,730 (չ)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐԵՒ ԸՆԿ.
յանձնարարում է
„ՊԵՏՐՕԼ“ (ՀԵՂՈՒԿ)
մազերը ամրացնելու համար։
(ՍԱՊՈՆ) „ՊԵՏՐՕԼ“
Մազերի թեփը ոչնչացնելու համար։
(20) 1—10

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Марта 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27